

ՀԱՅԵՐԷՆԻ «ՊԱՇՏԱԻՆ» ԲԱՌԻ ԾԱԳՈՒՄՆԱԾԱՆԱԶՈՂԱԿԱՆ ԲՆՈՅԹԸ

Գարիկ Սկրտչեան

Հայերէնում պաշտաւն հասկացութիւնը լեզուական այլ, բառի բուն իմաստն արտայայտող փոխարինողներ կամ կայուն հոմանիշներ չունի¹: Նա լայնօրէն կիրառւում է Հայերէնի զարգացման խօսակցական եւ գրախօսակցական բոլոր փուլերում եւ Հայաստան հանրութեան հասարակական տարբեր կազմաւորումներում իր կենսունակութիւնն այնպէս է ամրապնդել, որ, ինչպէս բառարանային տուեալներն են վկայում, ընկած է տասնեակ նորանոր բաղադրութիւնների հիմքում: Նրանով ստեղծուած կազմութիւնները բնորոշում են մարդկանց կենսագործունէութիւնը, սոցիալ-մշակութային զանազան կապերը²:

Նոր Հայկազեան Բառարանում (ՆՀԲ) պաշտաւն բառով բաղադրուած ածանցումների ու բառաբարդումների քանակը 20-ն է՝ պաշտօնական, պաշտօնակից, պաշտօնամատոյց լինել, պաշտօնեայք, պաշտօնապայծառ, պաշտօնասէր, պաշտօն/ա/սիրութիւն, պաշտօնատար, պաշտօնատարութիւն, պաշտօնատարումն, պաշտօնատրութիւն, պաշտօնարան, պաշտօնարար, պաշտօնարկ, պաշտօնաւոր, պաշտօնեայ, պաշտօնետեղ, պաշտօներգութիւն, պաշտօնէական, պաշտօնուկք «շողոքորթութիւն»³: Ռուբէն Ղազարեանը, ի լրումն ՆՀԲ-ում եղած պաշտաւն բառով կազմութիւնների, իր բառարանում զետեղել է նաև հետեւեալ, թուով 7 յարադրութիւնները՝ պաշտօն առնել/ուլ, պաշտօն արկանել, պաշտօն հարկանել, պաշտօն տանել, ի պաշտօն մտանել, պաշտօնատար լինել⁴: Ռ. Ղազարեանի եւ Հ. Աւետիսեանի բառարանում բերւում են հետեւեալ յարադրութիւնները՝ ի պաշտօն դառնալ, պաշտօն մատուցանել⁵, իսկ Լաւրենտի Յովհաննիսեանի բառարանում՝ երկու նոր կազմութիւն՝ պաշտօնատեղ, պաշտօնիկ⁶:

Էդ. Աղայեանի բացատրական բառարանը, որն արտացոլում է արդի Հայերէնի

1 Որպէս բացատրեան՝ կարող ենք մշել աթոռ բառը, որը իմաստափոխութեան՝ բառիմաստի ընդլայնման կամ մեղացման օրէնքով (տե՛ս Էդ. Աղայեան, *Ընդհանուր եւ հայկական բառագիտութիւն*, Եր., 1984, էջ 101-105) վերջին տարիներին ձեռք է բերել պաշտօն բառի իմաստը յատկապէս խօսակցական լեզուի տարբեր ոճերում, որում ընդգծուած հեզմանք, սարկազմ ու սատիրա կալ, ինչպէս՝ աթոռը (իմա՝ պաշտօնը) պիմդպիմդ բռնել է, բաց չի թողնում, աթոռից զրկուեց եւ այլն:

2 Ընդհանուր առմամբ՝ պաշտօն անուանող բառերը հայերէնի բառապաշարում առանձին խումբ են կազմում, որոնց քննութիւնն այս հետազոտութեան մէջ չի մտնում: Կարելոյեմք՝ հայերէնում պաշտօն անուանող բառերը ոչ միայն արմատական միատրներ են ու հայերէնի բառակազմական կաղապարներով ստեղծուած բաղադրութիւններ, այլեւ գրեթէ բոլոր ժամանակներում փոխառուել են տարբեր լեզուներից՝ ձեւատրելով պաշտօն անուանող բառերի իմաստային թեմատիկ խումբ (Կանթեղ, Գիտական յօդուածներ, *Անահիտ Աղիլյանեան, Պաշտօն ցոյց տուող բառերի իմաստաբանական առանձնաչափութիւնները*, Եր., 2017, ՀՀ ԳԱԱ Արուեստի ինստիտուտ, էջ՝ 59-67):

3 Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, Հայր Գարիկէ Աւետիքեան, Հայր Խաչատուր Սիրմեւեան, Հայր Մկրտիչ Աւգերեան, Վեմետիկ-Ա. Ղազար, հտ. Բ, 1837, էջ 598-599:

4 Ռ. Ղազարեան, *Գրաբարի բառարան*, հատոր 2, Երեւան, 2000, էջ 386-387:

5 Ռ. Ղազարեան, Հ. Աւետիսեան, *Նորայայտ բառեր գրաբարում*, Երեւան, 2007, էջ 86:

6 Լ. Յովհաննիսեան, *Գրաբարի բառարան*. Նոր հայկազեան բառարանում չվկայուած բառեր, Երեւան, 2010, էջ 237-238:

բառապաշարի աւելի մեծ տուեալներ, բացի պաշտաւն բառով կազմուած աւելի վաղ գործածութիւններէ՝ վկայում է բազմաթիւ նորանոր կազմութիւններ, ընդհանուր՝ 62 միաւոր, որոնք տրւում են ստորեւ՝ պաշտօնաբաշխութիւն, պաշտօնագիր, պաշտօնագրային, պաշտօնադուռ, պաշտօնագրգեստ, պաշտօնագրկել, պաշտօնագրկուել, պաշտօնագրկութիւն, պաշտօնագրկում, պաշտօնագրուրկ, պաշտօնաթերթ, պաշտօնաթերթային, պաշտօնաթող, պաշտօնաթողուել, պաշտօնաթողութիւն, պաշտօնաթողութ, պաշտօնակալ, պաշտօնակալութիւն, պաշտօնականանալ, պաշտօնականացնել, պաշտօնականացուել, պաշտօնականացում, պաշտօնականօրէն, պաշտօնականութիւն, պաշտօնակատար, պաշտօնակատարութիւն, պաշտօնակարգել, պաշտօնակցական, պաշտօնակցութիւն, պաշտօնամուլ, պաշտօնամուլութիւն, պաշտօնային, պաշտօնանկ, պաշտօնանկութիւն, պաշտօնապաշտ, պաշտօնապաշտութիւն, պաշտօնապէս, պաշտօնասենեակ, պաշտօնավայր, պաշտօնավար, պաշտօնավարական, պաշտօնավարել, պաշտօնավարութիւն, պաշտօնավարում, պաշտօնաւորել, պաշտօնաւորուել, պաշտօնաւորութիւն, պաշտօնատեղ, պաշտօնատեղի, պաշտօնատէր, պաշտօնատուութիւն, պաշտօնատու, պաշտօնատուն, պաշտօնացաւ, պաշտօներգ, պաշտօնէութիւն, պաշտօնընկէց, պաշտօնեայ, պաշտօն մատուցանել, պաշտօն մատուցել, պաշտօն տանել, ի պաշտօնէ⁷:

Սեդա Էլոյեանը իր բառարանում ներառում է թուով 19 նոր կազմութիւններ՝ պաշտօնաբազմութիւն, պաշտօնաբաշխում, պաշտօնաբեմ, պաշտօնադրում, պաշտօնագօր, պաշտօնաթու, պաշտօնակալում, պաշտօնականացում, պաշտօնայարգութիւն, պաշտօնամէտ, պաշտօնամուտ, պաշտօնանկում, պաշ-

տօնանկում, պաշտօնասանդուղք, պաշտօնավաճառութիւն, պաշտօնապարոյր, պաշտօնարժէք, պաշտօնափոխութիւն⁸: Պաշտօն բառը չի կորցրել իր բառակազմական կենսունակութիւնը նաեւ վերջին տարիներին: Լեզուի ինստիտուտի հրատարակած նոր բառերի պրակներում գետեղուել են հետեւեալ երկու կազմութիւնները՝ պաշտօնացանկ (Ա պրակ), պաշտօնախումբ (Բ պրակ)⁹:

Ըստ ընդհանուր տուեալների՝ հայերէնի զարգացման բոլոր փուլերում եւ մինչ օրս պաշտօն բառով տարատեսակ բաղադրական կազմութիւնների քանակը 114-ն է: Ընդ որում՝ 83-ը ստեղծուել են 19-րդ, 20-րդ, 21-րդ դարերում, իսկ 31-ը՝ հիմնականում հայերէնի զարգացման հին շրջանում: Նշուած կազմութիւնների պատմական տուեալ ժամանակներում ստեղծուած լինելը պատահական լինել չեն կարող: Դրանք ամփոփում են հայ ժողովրդի պետական-մշակութային, սոցիալ-տնտեսական ձեռքբերումները, յեղաբեկումները, անկումներն ու վերելքները, այդ թւում՝ մարդկային յարաբերութիւնները, նրանց շահերն ու սոցիալական բխումները: Այս միաւորների գոյութիւնը վկայում է, որ պաշտօն բառն ակտիւօրէն գործում է հայերէնում, ունի բառակազմական ճկուն արժէք, զանազան կիրառութիւններ հայախօս հանրութեան կենսագործունէութեան մէջ, եւ այդ բառակերտումների առաջացման հիմքում ընկած է մարդկային մտքի զարգացումը: Պաշտօնէական յարաբերութիւնները, սոցիալ-իրաւական գործընթացների զարգացումը եւ դրանց կատարելագործումը, աշխատաշուկայի պահանջները տարբեր ժա-

7 Էդ. Աղայեան, Արդի հայերէնի բացատրական բառարան, Երեւան, 1976, էջ 1180-1181:

8 Ս. Էլոյեան, Արդի հայերէնի նորաբանութիւնների բառարան, Նաիրի հրատ., Երեւան, 2002, էջ 390, 391:

9 Նոր բառեր. Ա պրակ, 2015, էջ 157, Բ պրակ, 2016, էջ 116, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառեանի անուան լեզուի ինստիտուտ, Երեւան:

մանակներում յանգեցրել են պաշտօն հասկացողի գործառական հնարաւորութիւնների իրացմանը: Ընդ որում, նորանոր կազմութիւնների առաջացմանը նպաստում է նաեւ այն, որ պաշտօն բառը պատմականօրէն իրեն համապատասխան իմաստային կայուն, գործածելի, չեզոք տարբերակներ գրեթէ չունի:

* * *

Հետազոտութիւնները ցոյց են տալիս՝ պաշտաւն բառը հայերէն կազմութիւն է: Ըստ վերականգնումների՝ արմատական բառի տպաւորութիւն թողնող բառամիաւորն ածանցային բաղադրութիւն է: Այն ի յայտ է եկել, սկսել գործառել հայաստ բնակավայրերում հեթանոսութեան եւ բազմաստուածութեան բուռն ծաղկման շրջանում: Գ. Զահուկեանը պաշտաւն բառի գործածութեան ի յայտ գալու շրջանը ժամանակագրում է հայերէնի զարգացման վաղնջական շրջանում՝ վաղնջահայերէնում¹⁰: Սա համապատասխանում է հայերէնի՝ որպէս ինքնուրոյն լեզու կազմաւորման ընթացքին՝ ընդգրկելով Ք.ա. երրորդ հազարամեակի սկզբներից մինչեւ 13-րդ դարը:

Գ. Զահուկեանը պաշտաւն բառի վերաբերեալ գրել է՝ «Պաշտաւն (պաշտօն) բառի հոլովման ժամանակ առկայ է զրո/ա/ու հերթագայութիւնը, որը հին հայերէնի նով հիքմերի հոլովման ժամանակ նկատուող (ը)/ա/ու հերթագայութեան մի տարբերակն է (հմտ. պաշտաւն-պաշտաման-պաշտամունք եւ ատամն-ատաման-ատամունք): Միաժամանակ այս բառի հոլովման ժամանակ գործում է մի ձայնորդային հերթագայութիւնը, ընդ որում՝ մ-ն և-ից առաջ փոխուել է լ-ի, ձայնաւորներից առաջ պահպանուել: Այդ բառի արմատը իրանական ծագում ունի (pari-sta>պարշ-

տալ> պաշտալ) եւ աճած է հնդեւրոպական ծագում ունեցող մ(ը)ն /-մուն/ման (<*men/*-mon/*-mn) մասնիկով՝ մասնիկի ձայնաւորի հերթագայութեամբ հանդերձ»¹¹:

Պատմականօրէն առաջացել են պաշտաւն եւ պաշտումն զուգահեռ գործածելի ձեւերը, որոնց համար պատճառ կարող են լինել հինգ հիմնական գործօններ՝ հնչիւնական, ձեւաբանական, բառակազմական, իմաստային եւ ծագումնաբանական: Ստորեւ շարադրանքում կը քննենք դրանցից իւրաքանչիւրը առանձին-առանձին:

այ) Հնչիւնական դիտարկումներ: Պաշտաւն/պաշտումն տարբերակները առաջացել են հնչիւնական եւ ձեւաբանական որոշակի բացառութիւններ ճանաչող փոփոխութիւնների շնորհիւ: Վերականգնումները ցոյց են տալիս, որ նախագրային հայերէնում տարբերակուել են *պաշտաւն (*pari-sta, *pari-štamna-) և *պաշտումն ձեւերը՝ բառահիմքային տարբերակներում ունենալով պարշտա>պաշտաւ ձեւերը՝ pari-sta>պարշտա>պաշտաւ անցմամբ, որոնց եւ կցուել է հնդեւրոպական ծագում ունեցող մ(ը)ն/-մուն/-ման (<*men/*-mon/*-mn) մասնիկը՝ ձեւաւորելով *պաշտաւն հիմնաձեւը: Ի դէպ, այս մասնիկի կցումով անուններ կազմելն օրինաչափ է նախագրային հայերէնում, կան որոշ վկայութիւններ՝ այծեամն>այծեման, ատամն>ատաման, եղեամն>եղեման, կողմն>կողման, կոտիմն>կոտման, հիմն>հիման, որոմն>որոման, ջերմն>ջերման, սերմն>սերման եւ այլն:

Առաջին փոփոխութիւնը պաշտաւն/-պաշտումն հնարաւոր տարբերակների մէջ պէտք է տեսնել: Կիրառութեան առումով ժամանակի ընթացքում յաղթող է ճանաչուել պաշտումն տարբերակը, իսկ միւսը՝ հնչիւնափոխուել: Պաշտաւն ձեւից պաշ-

10 Գ. Զահուկեան, Հայոց լեզուի պատմութիւն, Երեւան, 1987, էջ 25:

11 Գ. Զահուկեան, Հին հայերէնի հոլովման սխալները եւ նրա ծագումը, Երեւան, 1959, էջ 178:

տումն ձեւի առաջացումը հնչիւնական օրէնքներով հնարաւոր չէ բացատրել, քանի որ հայերէնին բնորոշ է գոյականներ կերտել –ումն մասնիկով եւս՝ ազդումն, անկումն, դեգերումն, երդումն, երեւումն, խոստումն, խոտորումն, կոչումն, հարցումն, շարժումն եւ այլն: Սա օրինաչափ երեւոյթ է, քանի որ պաշտաւ-բառաբանի ա-ի անկումը կարող էր հիմք հանդիսանալ, որ բաղաձայնավերջ պաշտ միաւորին աւելանար –ումն ածանցը: Այն կարող էր տեղի ունենալ նաեւ վերոնշեալ բառերի համաբանութեամբ: Քիչ է հաւանականութիւնը, որ այստեղ գործած լինի տարնմանութեան օրէնքը, համաձայն որի՝ պաշտումն բառի առաջին վանկի ա-ն կարող էր ազդել երկրորդ վանկի ա-ի վրայ՝ այն որեւէ յատկանիշով տարբերելով իրենից:

Յաջորդ հնչիւնական դիտարկումը, որը, կարծում ենք, աւելի ծանրակշիռ է, վերաբերում է պաշտումն>պաշտումն անցմանը: Այս անցման գործում, ինչպէս վերականգնումներն են ցոյց տալիս, դեր է կատարում ձայնադարձը՝ ձայնաւորների հերթագայական, կանոնաւոր փոփոխութեանը*: Հնդեւրոպական հիմք լեզուում ձայնադարձը գործել է կանոնաւորապէս՝ ներկայացնելով ձայնաւորների հերթագայութեան հիմնական տիպը: Տարբերակուել են ձայնադարձի՝ հերթագայութեան վերին կամ բարձր (*e *(ē)), միջին (*o *(ō)) եւ ստորին կամ ցածր (-գրոյ) աստիճաններ, որոնք արտացոլում են հնդեւրոպական ձեւաւորումների՝ արմատների, հիմքակազմ ածանցների, վերջաւորութիւնների ձայնաւորման հիմնական տեսակները:

Ընդ որում, ստորին աստիճանում ձայնաւորն անհետանում է: Հնդեւրոպական եւ ոչ մի լեզուում ձայնադարձի բոլոր աստիճանները չեն գործում: Ձայնադարձի այս երեք աստիճանները վերապրուկների տեսքով պահպանուել են հնդեւրոպական գրեթէ բոլոր լեզուներում, այդ թւում՝ նաեւ հայերէնում՝ խեչակ/խոչ/խաչ, հետք/ոտն/յատակ, քերել/քորել/քարք եւ այլն: Ըստ Հ. Աճառեանի՝ հայերէնը ձայնադարձը քերականութեան մէջ «ջնջել» է եւ պահպանում է ընդամէնը մի աստիճան¹²:

Հր. Աճառեանը ձայնադարձային երեւոյթների մասին կարեւոր դիտարկում է անում. «Սովորաբար հնդեւրոպական նախալեզուի մէջ ձայնադարձը միայն բաւարար չէ արմատի նշանակութիւնը ձեւաւորելու համար, եւ մասնիկների օժանդակութիւնն անհրաժեշտ է: Եթէ մասնիկներն անհրաժեշտ են, որ պիտի տան արմատին ուղած նշանակութիւնը, ուրեմն այլեւս ինչ բանի են պէտք զանազան ձայնադարձները: Ձայնադարձի դերն այստեղ դառնում է աւելորդ եւ, ահա, հնագոյն ժամանակներից սկսած մայր լեզուները հետզհետէ ջնջում են ձայնադարձը: Բայց որովհետեւ ոչ մի բան, որ ջնջում է, չի կարող միանգամից վերանալ իսպառ, ուստի ձայնադարձի հետքերն էլ մնում են ամէն տեղ»¹³: Ուշադրաւ է, որ երկբարբառների հերթագայութիւնների ժամանակ դարձեալ փոփոխւում են ձայնաւորները՝ *oi *ei *i, *eu *ou *u, *er *or *r, *el *ol *l, *em *om *m, *en *on *n, եւ, ինչպէս նշում է Գ. Զահուկեանը, ձայնաւորների հերթագայութեան դեպքում ձայնորդը ստորին (զրո) աստիճանում հանդէս է գալիս որպէս ձայնաւոր¹⁴, այսինքն՝ ձայնորդները անհետանում են:

* Ձայնադարձը հնչիւնների կայուն հերթագայութիւն է: Նոյն ձեւաւորումներում (արմատ, հիմքակազմ ածանց կամ վերջաւորութիւն) ձայնաւորների կանոնաւոր այն փոփոխութիւնները, որոնց հետեւանքով ստեղծւում են համագոյակից բառեր ու քերականական ձեւեր (Լեզուաբանական բառարան, Հ. Պետրոսեան, Ս. Գալստեան, Թ. Ղարաբաղիւեան, Հայկական ՍՍՀ ԳԱ, Երեւան, 1975, էջ 202):

12 Հր. Աճառեան, *Լիակատար քերականութիւն հայոց լեզուի*, Հ. 3, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1957, էջ 49:

13 Նոյն տեղում, էջ 30-31:

14 Գ. Զահուկեան, Հին հայերէնի հոլովման սիստեմը եւ նրա ծագումը, Երեւան, 1959, էջ 161:

Ընդ որում՝ ինչպես փաստերն են ցոյց տալիս, հնդեւրոպական լեզուներում հերթագայում են ինչպես առանձին ձայնաւորները, այնպես էլ երկբարբառների կազմում եղած ձայնաւորները:

Հետազոտութիւնները ցոյց են տալիս, որ պաշտամն>պաշտամն անցման մէջ կայ ոչ թէ ձայնաւորների, այլ՝ ձայնորդների հերթագայութիւն: Սա հնարաւոր, ինչպէս նաեւ բացառիկ իրողութիւն է, քանի որ հայերէնի ձայնդարձի երեւոյթները բացառապէս տեսանելի են ձայնաւորների համակարգում¹⁵: Ակնյայտ է, որ նախապատմական շրջանի հնդեւրոպական լեզուներում, այդ թւում հայերէնում ձայնորդները ձայնաւորների արժէք են ունեցել, եղել են նոյնիսկ վանկարար հնչիւններ, հետեւապէս՝ կարող էին նաեւ հերթագայուել: Այս պարագայում, կարծում ենք, տեղի է ունեցել ձայնորդների կայուն հերթագայութիւն՝ տալով մ>ւ անցումը՝ պաշտամն>պաշտամն: Սա վկայութիւն է այն բանի, որ նախազրային հայերէնում ոչ միայն հերթագայում են ձայնաւորները, այլեւ՝ ձայնորդները: Ձայնորդների այս հերթագայութիւնը բացառիկ նմուշ-օրինակ է ոչ միայն հայերէնում, այլեւ՝ հնդեւրոպական լեզուներում: Աւելին՝ սա յաւելեալ փաստ է, որ նախապատմական շրջանում հայերէնում եւս ձայնորդները ձայնաւորների արժէք են ունեցել: Հր. Աճառեանը, կարեւորելով, որ ձայնաւորների ձայնդարձը հիմնականում ձեւաբանական նշանակութիւն ունի, նկատել է, որ լեզուների մէջ կան բաղաձայնների եւ ձայնորդների ձայնդարձեր եւս, որոնք մասնաւոր դէպքեր են եւ չունեն ձեւաբանական արժէք: Նա, հայերէնի վերաբերեալ որեւէ վկայութիւն չտալով, գրում է. «Հնդեւրոպական նախա-

լեզուն ունէր նաեւ ձայնորդների եւ բաղաձայնների ձայնդարձ: Այսպէս՝ 3) Բառավերջում պատահում ենք ձայնաւոր+նդային, ինչպէս նաեւ առանց ռնգականի ձեւեր. Օր. Յուն. εφερε εφερεν «եբեր», εστι εστιν «է», երկակի տրակգործ. սանս. bhyām, իրան.- byā և այլն»¹⁶:

Գ. Զահուկեանը, ինչպէս վերեւում մէջբերել ենք, պաշտամն բառի համար բնութագրական էր նաեւ, որ նրա «հոլովման ժամանակ գործում է մ/ւ ձայնորդային հերթագայութիւնը, ընդ որում՝ մ-ն մ-ից առաջ փոխուել է լ-ի, ձայնաւորներից առաջ պահպանուել է: Հարցադրում կարող է լինել, թէ ի՞նչ հնչիւնաբանական գործօնների շնորհիւ է տեղի ունեցել այդ անցումը: Լեզուաբան էդ. Աղայեանը ապացուցուած է համարում, որ «...արտասանական եւ ձայնային յատկանիշներով ձայնորդները կարող են վերածուել սովորական ձայնաւորների, կամ, ընդհակառակն՝ բաղաձայնների ... որով եւ նրանք հնչիւնախօսական տեսակէտից կը ներկայանան որպէս տարբեր հնչիւններ»¹⁷: Պարզ է, որ հայերէնում ռնգային մ ձայնորդը ըստ արտաբերման տեղի երկչրթնային է եւ, ինչպէս ժամանակակից հայերէնում է, նրան նախորդած ենթափուլերում եւս արտաբերուել է աւելի թոյլ հպումով ու պայթիւնով: էդ. Աղայեանը հէնց այս գործօնով է բացատրում ձայնորդ մ-ի վերածումը լ-ի, որը նոյնպէս բնութագրում է արտաբերական թոյլ հպումով եւ պայթիւնով՝ օրինակ վկայակոչելով *անումն>անում>անում անցումը¹⁸: Հնչիւնաբանական վերլուծութիւնները ցոյց են տալիս, որ մ-ն ռնգային, երկչրթնային հնչիւն է, իսկ լ ձայնորդը անընդ-

15 Ա. Խաչատրեան, Զայնարձի հիմ երեւոյթներ հայ բարբառներում, Միջազգային հայերէնագիտական գիտաժողով, (Երեւան, 21-25 սեպտեմբեր, 1982թ.), Զեկուցումներ, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1984, 318-326:

16 Հր. Աճառեան, Լիակատար քերականութիւն հայոց լեզուի, Հ. 3, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1957, էջ 30:

17 Էդ. Աղայեան, Գրաբարի քերականութիւն, Երեւան, 1964, էջ 169, 171:

18 Նոյն տեղում, էջ 232:

Հատական հնչիւն է: Այն մ հնչիւնի հետ միաւորւում է երկշրթնայնութեան յատկանիշով: Ն եւ մ բաղաձայնները միաւորւում են ռնգայնութեան յատկանիշով եւ տարբերակւում ւ-ին բնորոշ լեզուաքմային յատկանիշով: Հետեւապէս՝ կարող է նաեւ ւ-ի փոխազդեցութիւնը դեր ունեցած լինի մ>ւ ձայնդարձային հերթազայութեան համար, որով ւ-ն իրենց տարբերակել է ռնգայնութեամբ իրեն նման մ-ին: Ընդ որում, պաշտամն>պաշտամն անցման մէջ տեղի ունեցած մ>ւ ձայնորդային հերթազայութիւնը հիմք է հանդիսացել, որ ձեւաւորուի փակ վանկում աւ երկբարբառը: Ուշագրաւ է, որ պաշտամն>պաշտամն անցումը հիմնաւորւում է նաեւ նրանով, որ թեք՝ քերականական ձեւերում վերականգնւում է *պաշտամն գոյականի երբեմնի պատկերը՝ *պաշտամն: Սա կատարուած ձայնորդային ձայնդարձի վերականգնման ցայտուն վկայութիւն է: Ըստ ամենայնի՝ սեռական հոլովում գործող պաշտամն ձեւն ամբողջապէս վերականգնւում է պաշտումն գոյականին գոլգահո գործածութիւն ունեցած պաշտամն տարբերակային ձեւը:

բ) Ձեւաբանական դիտարկումներ: Ձայնդարձը հնդեւրոպական նախալեզուի քերականութեան մէջ պարզ արմատը ձեւաւորելու եւ բաղմացնելու միջոցներից մեկն է համարւում: Արդի հնդեւրոպաբանութեան մէջ ընդունելի է, որ հնդեւրոպական նախալեզուին եւ հնդեւրոպական լեզուներին բնորոշ ձայնդարձի երեւոյթը՝ ձայնաւորների հերթազայութիւնը, ինքնանպատակ չի եղել եւ ունի տարբեր արժէքներ: Ձայնդարձը ունեցել է ինչպէս ձեւաբանական գործառնութ՝ արտայայտելով քերականական տարբեր իմաստներ, այնպէս էլ բառակազմական գործառնութ՝ կազմելով արմատի՝ իմաստային տարբերութիւններով ուղեկ-

ցուող տարբերակային ձեւեր¹⁹: «Իսկական ձայնդարձը այն է, որ անկախ է ձայնաբանական պատճառներից եւ ձեւաբանական երեւոյթ է»²⁰, - լիակատար քերականութեան մէջ գրել է Հր. Աճառեանը: Ձայնդարձի՝ որպէս հնչիւնական իրողութեան վերջնական նպատակը ձեւաբանական փոփոխութիւնների յանգելն է:

Ձայնդարձի շնորհիւ տարբերւում են իրարից ոչ միայն տարբեր հոլովներ, այլեւ որոշ դէպքերում այն հանդէս է գալիս որպէս հոլովները տարբերակող միակ միջոցը: Այս առումով կարեւոր դիտարկումներ է կատարել Գ. Զահուկեանը. «Հին հայերէնի հնչիւնական հերթազայութիւնների մի մասը ծագել է հնդեւրոպական հերթազայութիւններից՝ վերջիններիս պատմական ձեւափոխութեան ճանապարհով, միւս մասը արդիւնք է հնդեւրոպականից հին հայերէնին անցնելիս կատարուած հնչիւնական-ձեւաբանական պրոցեսների, որոնց ձեւաւորման հարցում կարեւոր դեր է կատարել անալոգիան»²¹:

Այստեղ հարց է առաջանում՝ արդեօ՞ք պաշտամն>պաշտամն ձայնորդային հերթազայութեամբ ձեւակազմական խնդիր է լուծուել: Կարծում ենք՝ դա հնարաւոր չէ, քանի որ պաշտամն ձեւը, որպէս բառի ուղիղ ձեւ, իր քերականական գործառնութով չի տարբերակւում պաշտամն ձեւի քերականական իմաստից մեկ այլ քերականական իմաստով: Հետեւապէս ձայնորդային այս հերթազայութիւնը բացառապէս հնչիւնական երեւոյթ է: Ընդամէնը սահմանափակ-

19 Ն. Սիմոնեան, Հնդեւրոպական ձայնդարձի արտացոլումը հին հայերէնի բայարմատներում, Հայագիտութիւնը եւ արդի ժամանակաշրջանի մարտահրաւերները, Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., էջ 319-322:

20 Հր. Աճառեան, Լիակատար քերականութիւն հայոց լեզուի, Հ. 3, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1957, էջ 33:

21 Գ. Զահուկեան, Հին հայերէնի հոլովման սիստեմը եւ նրա ծագումը, Երեւան, 1959, էջ 159-160:

ւում է հայերէնում -ա+մն վերջնայանգով բառերի քանակային կշիռը: Այս պարագայում պէտք է արձանագրել, որ հնչիւնական փոփոխութիւնը չի յանգեցրել ձեւաբանական փոփոխութիւնների, այլ առաջացել է պաշտումն տարբերակին համագոյակից մեկ այլ տարբերակ, որը պարզորոշ երեւում է նոյնիսկ նրանց հոլովման համակարգում: Թեք հոլովներում վերականգնւում է հոլովական այն նոյն համակարգերը, որ ունեցել են պաշտումն/պաշտումն զուգահեռ ձեւերը. հոլովական տարբերութիւններ չեն յայտարարուում:

Հնարաւոր չէ վերականգնել պաշտումն>պաշտումն հերթագայութեան անցման ստոյգ ժամանակը: Այդուհանդերձ, պաշտումն եւ պաշտումն ձեւերը զուգահեռ գործածուող տարբերակներ են եղել պատմական որոշակի ժամանակահատուածում՝ գուցէ եւ ունենալով տարածքային որոշակի սահմանափակուածութիւն: Սակայն հնարաւոր է դարձել մօտաւոր ցոյց տալ, որ պաշտումն>պաշտումն ձեւերն աւելի վաղ գործածութիւն ունեն, քան պաշտումն ձեւը: Սա հիմք է դառնում եզրակացնելու, որ պաշտումն ձեւի վերացումն է հիմք հանդիսացել պաշտումն տարբերակի առաջացման համար: Ըստ Գ. Զահուկեանի վերականգնումների՝ պաշտումն գոյականը վաղնջահայերէնում եղած վկայութիւնների շարքում չկայ: Այն գործածուում է բացառապէս գրաւոր աղբիւրներում:

Վիճակագրական տուեալները ցոյց են տալիս, որ թէ՛ պաշտումն, թէ՛ պաշտումն ձեւերը հայ մատենագրութեան աղբիւրներում, սկսած 5-րդ դարից, լայն գործածութիւններ ունեն: Երկու գոյականներն էլ պատկանում են ձայնորդահիմք հոլովումների թուին: Պաշտումն բառի հոլովման առանձնայատկութիւններում կարեւորւում է վանկաքանակութեան գործօնը. հոլովուում է ւ/ւն/ուն հիմքերով, իսկ պաշտումն գոյականն հոլովուում է (ը)ն/ւն/ուն

հիմքերով: Պատմականօրէն տարբերակուած երկու գոյականների հոլովումը տրւում է ստորեւ՝

Ու. պաշտումն պաշտամունք
պաշտաւն

Հ. (զ) պաշտումն (զ) պաշտամունս
(զ) պաշտաւն

Ս. պաշտաման պաշտամանց

Տ. պաշտաման պաշտամանց

Բ. ի պաշտամանէ ի պաշտամանց

Գ. պաշտամամբ պաշտամամբք²²:

Ըստ ամենայնի՝ պաշտումն բառը հոլովուում է -մն ածանց ունեցող գոյականների պէս՝ նոր ձեւաբանական կազմով պահպանելով նախնական հոլովական, ըստ ծագման ունեցած առանձնայատկութիւնները²³:

Հին հայերէնում եւ նրա հիման վրայ զարգացած բարբառներում ձայնդարձը «ջնջուած» է, ընդգծենք, որ այն հայերէնում թողել է զանազան հետքեր: Նրա վերապրուկները լաւագոյնս երեւում են -ն յանգող բառերի հոլովման ժամանակ՝ հարսն/հարսին/հարսամբ/հարսունք/հարսանց, հարսամբք, մատն/մատին/մատամբ/մատունք/մատանց եւ այլն: Այս ձեւերի եւ նրանց հոլովական իւրայատկութիւնների գոյութիւնը, ձեւակազմական արժէքը ցոյց են տալիս պաշտամն/ պաշտաւն/ պաշտումն բառերի ձայնդարձային հերթագայութիւնների ենթարկուելու անվիճելի փաստը:

Արդի հայերէնում պաշտօն բառը ենթարկւում է ի ընդհանրական հոլովման եւ որեւէ հոլովական իւրայատկութիւն չունի²⁴:

22 Գ. Զահուկեան, Հիմ հայերէնի հոլովման սիւստեմը եւ նրա ծագումը, Եր., 1959, էջ 101, 116:

23 Ռ. Ղազարեան, Հ. Աւետիսեան, Գրաբարի ձեռնարկ, Երեւան, 2007, էջ 60, Աշոտ Արքայապետեան, Գրաբարի ձեռնարկ, Երեւան, 1958, էջ 33:

24 Էդ. Աղայեան, Արդի հայերէնի բացատրական բառարան, Երեւան, 1976, էջ 1180:

գ) Բառակազմական դիտարկումներ: Պաշտամունք>պաշտում անցման հնչիւնական կարեւոր իւրայատկութիւններից մեկն այն է, որ փակ վանկում -աւ հնչիւնական պակցութիւնը պատմականօրէն վերածուել է երկբարբառի, ձեռք բերել օ արտասանութիւնը, իսկ ռնգային ւ-ի հետ վերածուել -օն/ոն բառակազմական ձեւոյթի: Այն, ի դէպ, որպէս ածանց, կենսունակ է հայերէնի զարգացման յետագայ ընթացքում՝ բրդօն, գործօն, կթօն, կոնօն, մեոն եւ այլն: Ի դէպ, -աւն-ը, որպէս ածանց, կայ նաեւ վաղնջահայերէնում կիրառութեան դրուած հաւատադաւանաբանական, նախապաշարմունք արտայայտող կրաւն/կրօն բառում, որը բաղադրուած է կրեմ (կրել) բայից՝ «կարգուկանոն, օրէնք, հաւատ, կրօն» անցումներով: Գ. Զահուկեանը այս հասկացութեան վերագրուող «կրօն» իմաստի առկայութիւնը վաղնջահայերէնում կասկածելի է համարում հաւաստելի փաստերի բացակայութեան պատճառով²⁵: Համադրելի պաշտում եւ կրաւն բառերի բառակազմական համընկնումներում հետաքրքիրն այն է, որ երկու բառերն էլ գտնւում են իմաստային միեւնոյն ոլորտում. -աւն (օն) բառակազմական ձեւոյթը կարող է գործածուել միեւնոյն իմաստային դաշտ ունեցող բառարմատների հետ: Քանի որ ստոյգ հնարաւոր չէ փաստել՝ պաշտումն է աւելի հի^օն ձեւ, թէ^օ կրաւնը, հետեւաբար չենք բացառում, որ դրանից մեկի համաբանութեամբ կարող է առաջացած լինել երկրորդ ձեւը: Բայց հաւանական ենք համարում պաշտում ձեւի ազդեցութեամբ կրաւն ձեւի առաջացումը, քանի որ կրաւն բառը փոփոխութեան առումով համեմատութեան այնպիսի եզր չունի, ինչպիսին պաշտամունք/պաշտում բառի անցման համար:

25 Գ. Զահուկեան, Հայոց լեզուի պատմութիւն, Երեւան, 1987, էջ 274:

Պաշտում/պաշտումն բառերի թեք հոլովները եւս ունեն բառակազմական որոշակի ճկունութիւն: Սեռական-տրականի պաշտամունք ձեւը պահպանուել է պաշտամունք բայական կազմութեան մէջ²⁶: Բառացառական հոլովի՝ ի պաշտամունք ձեւի իմաստային համաբանութեամբ լայն կիրառութիւն ունի ի պաշտօնէ քարացած ձեւը, որի կիրառութեան ի յայտ գալու ժամանակը, կարծում ենք, միջին հայերէնն է: Յոգնակի ուղղականի պաշտամունք ձեւը հայերէնի զարգացման միջին եւ նոր շրջափուլերում ինքնուրոյն կիրառութիւն ունի, վերածուել է ինքնուրոյն բառամիաւորի, ձեռք բերել կայուն իմաստներ, որոնք հիմնականում չեն տարբերւում պաշտօն բառի իմաստներից²⁷: Միջին հայերէնում այն ներկայանում էր պաշտմունք («պաշտամունք, երկրպագութիւն») տարբերակով²⁸: Հայերէնում այս երեւոյթը օրինաչափ է, քանի որ բառի քերականական ձեւերից ուղիղ, ելակետային ձեւերի առաջացումը սովորական երեւոյթ է, եւ մեր լեզուն՝ իր տարածքային տարբերակները վերցրած, հարուստ է նման բազմաթիւ փաստերով՝ անձինք, ակունք, երիցս, իրաւամբ, թանաւ, խորոված, կաթնով, կեցցէ, հասցէ, հուլունք, մասամբ, մասին, չորս, պաշտամունք, պաս, տարերք, քրտինք եւ այլն:

դ) Իմաստաբանական դիտարկումներ: Պաշտամունք>պաշտում եւ պաշտումն ձեւերը ի սկզբանէ ունեցել են անկախ գործածութիւն՝ ենթադրաբար ունենալով տարածքային տարբերակութիւն: Այս համատեքստում ուշագրաւ է նաեւ պաշտում եւ

26 Լ. Յովհաննիսեան, Գրաբարի բառարան՝ Նոր հայկազեան բառարանում չվկայուած բառեր, Էդիթ Պրինտ, Երեւան, 2010, էջ 237-238:

27 Էդ. Աղայեան, Արդի հայերէնի բացատրական բառարան, Երեւան, 1976, էջ 1180:

28 Ռ. Ղազարեան, Հ. Աւետիսեան, Միջին հայերէնի բառարան, ԵՊՀ հրատ., Եր., 2009, էջ 640:

պաշտումն բառերի իմաստային իւրայատկութիւնները:

Հետազոտութիւնները ցոյց են տալիս, որ պաշտումն եւ պաշտումն բառերն արտայայտում են նոյն իմաստները: ՆՀԲ-ում այս բառերի միջեւ իմաստային տարբերակում չի դրւում: Նկարագրելով պաշտումն բառը՝ ՆՀԲ-ի հեղինակները յղում են պաշտումն բառը: ՆՀԲ-ում տրւում է պաշտումն հասկացութեան չորս իմաստ՝ «1. բարեկրօն ծառայութիւն, սպասահարկութիւն, աստուածապաշտութիւն. պաշտելն զաստուած երկրպագութեամբ եւ պատարագօք եւ աղօթիւք. Կրօնք. Կարգ. հանդէս արարողութեանց..., 2. առարկայ պաշտաման. դիք, կուռք, աղանդ..., 3. սարկաւազութիւն, սպասաւորումն, ժամերգութիւն..., 4. գործ հաճոյական, հաճոյք, շնորհակէք, մարդահաճութիւն...»²⁹: Պաշտումն բառը ՆՀԲ-ում ունի հետեւեալ բացատրութիւնը. «ՊԱՇՏՈՒՄՆ, Պաշտելն ըստ ամենայն առման, պաշտելութիւն. տես եւ ՊԱՇՏՈՆ»³⁰:

Ռ. Ղազարեանի Գրաբարի բառարանում վերատրուում են բառի ՆՀԲ-ում եղած իմաստները՝ «ՊԱՇՏՈՆ, 1. Աստծուն պաշտելը, աստուածապաշտութիւն, պաշտամունք, 2. Սուտ պաշտամունքի առարկայ, հեթանոսական աստուածներ, կուռք, 3. եկեղեցական արարողութիւն, սպասաւորութիւն, ժամերգութիւն, 4. Ամեն տեսակ ծառայութիւն աստծուն կամ մարդկանց»³¹, իսկ Ղազարեան բառարանում պաշտումն բառն ունի հետեւեալ բացատրութիւնը՝ «ՊԱՇՏՈՒՄՆ, Պաշտելը, պաշտուելը»³²:

Ռ. Ղազարեանը գրաբարի հոմանիշների բառարանում պաշտաւն բառի առաջին հոմանշային իմաստը համարում է «պաշտումն, աստուածապաշտութիւն,

պաշտամունք», երկրորդը՝ «դիք, կուռք», երրորդը՝ «սարկաւազութիւն, սպասաւորութիւն» բառերը, իսկ պաշտումն բառի համար՝ «գ. պաշտելութիւն, պաշտաւն»³³:

Այս տուեալները հիմնաւորապէս ցոյց են տալիս, որ պաշտումն եւ պաշտումն ձեւերը միեւնոյն հասկացութեան ձեւաիմաստային տարբերակներն են, եւ, գուցէ, հայերէնի՝ նախագրային վիճակներում տարածքային (բարբառային) որոշակի տարբերակութիւն են ունեցել: Պատահական չեն կարող լինել միեւնոյն հասկացութեան երկու տարբեր դրսեւորումները: Երկու միաւորների իմաստաբանական համապատասխանութիւնը ցոյց է տալիս, որ ձայնդարձային հերթագայութիւնն իմաստների տարբերակման հիմունք չի հանդիսանում:

Էդ. Աղայեանի բառարանում տրւում են բառի արդի դրութեամբ ունեցած բոլոր գործածելի իմաստները՝ «ՊԱՇՏՈՆ, ի, գ. 1. Հիմնարկում՝ ձեռնարկութիւնում եւ մեկի ծառայութեան դիրքը եւ դրա հետ կապուած պարտականութիւններն ու իրաւունքները: 2. Ծառայութեան իւրայատուկ պարտականութիւնների ամբողջութիւնը՝ աշխատանքը, 3. Որեւէ կարգի հանգամանքների՝ դրութեան եւ հետ կապուած պարտականութիւնների ամբողջութիւնը, 4. Տուեալ համակարգի մէջ նրա միաւորների յատուկ դերը՝ գործառոյթը (ֆունկցիան): Ենթակայի՝ ստորոգեալի՝ որոշչի պ., 5. (հնց.) պաշտամունք, 6. Ծառայութեան տեղ, հաստիք, 7. Դեր, իբրեւ որեւէ բանի ծառայելը»³⁴: Էդ. Աղայեանի բառարանում վկայւում է պաշտում գոյականը՝ «ՊԱՇՏՈՒՄՆ, գ. 1. պաշտելը, պաշտուելը:

29 Նոր բառգիրք Հայկազեան լեզուի..., էջ 598:

30 Նոյն տեղում, էջ 597:

31 Ռ. Ղազարեան, Գրաբարի բառարան, հտ. 2, էջ 386:

32 Նոյն տեղում, էջ 386:

33 Ռ. Ղազարեան, Գրաբարի հոմանիշների բառարան, Անթիլիաս, 2006, էջ 577:

34 Էդ. Աղայեան, Արդի հայերէնի բացատրական բառարան, հատոր 2, էջ 1180:

2. Պաշտամունք: ՊԱՇՏՈՒՄ², ի, գ. (գլուհնց.): Պատարագից յետոյ տուած ճաշ»³⁵:

Ինչպէս լեզուական փաստերն են վկայում, Հայերէնի պատմական զարգացման ընթացքում պաշտումն բառի իմաստի հիմքում պատմականօրէն ամրակայուել է, որոշակիացել է հիմնականում «ծառայողական դիրք» հասկացութային իմաստը՝ իր տարբեր իմաստներով, ինչպէս նաեւ նրանից կազմուած տարակառույց բաղադրութիւններով: Վերջիններս, ըստ ամենայնի, պատճառահետեւանքային կապերի մէջ են գտնուում նրա ունեցած սկզբնական իմաստների հետ, իսկ աւելի վաղ ունեցած կրօնադաւանաբանական իմաստները շարունակում են պահպանուել Հայ առաքելական եկեղեցու ծիսակարգերում³⁶:

Կարեւորենք, որ հին շրջաններում ունեցած պաշտամունքային իմաստները կորչել են ժամանակի ընթացքում, չեն գիտակցւում, մթազնել են յատկապէս Հայերի քրիստոնէութիւն ընդունելուց յետոյ: Ժամանակի ընթացքում պաշտամունք-գերբնական ուժեր-մարդ յարաբերութիւնների խզումը յանգեցրել է այդ իմաստների վերացմանը, իսկ մարդ-մարդ յարաբերութիւնների շնորհիւ այդ բառերն ստացել են իմաստային նոր երանգաւորումներ, իմաստային նոր բովանդակութիւն: Միայն խորքային համեմատութիւններով է հնարաւոր վերականգնել նրանց միջեւ եղած իմաստային կապը:

Շարժման, ընթացքի գաղափար արտայայտող պաշտամունք/պաշտում/ պաշտումն Հայերէն կազմութիւնների հիմքում ընկած է նախադրային հայերէնում գործածուած պաշտեմ (պաշտել) բայի պաշտ բայարմատը: Ըստ բառարանային տուեալների՝ պաշտեմ բայի արտայայտած իմաստներն ուղղակիօրէն արտացոլուած են դիտար-

կուած կազմութիւններում՝ «ՊԱՇՏԵՄ 1. Կրօնասիրութեամբ մեծարել աստծուն. յարգել զնա երկրպագութեամբ, պատարագօք, պաղատանօք, եւ մանաւանդ հաւատարիմ եւ վայելչական ծառայութեամբ... 2. ...սպաս տանել ի տանն Աստուծոյ, առնել զգործս կրօնի..., 3. Սպասահարկել. ծառայել. աշխատել ի պէտս աշոյ. մատուցանել զպէտս, դարմանել. հոգալ, պահել, ունել զպաշտօն ինչ, եւ վարել, կատարել... պաշտիմ վարել ի պէտս. վարիլ իւրի կամ յիմն. ի կիր արկանել, եւ արկանիլ. դնիլ. լինել»³⁷, կամ՝ «ՊԱՇՏԵԼ¹, եցի, ն. 1. Կրօնասիրութեամբ աստծուն ծառայել՝ մեծարել, աստծուն արժանի յարգանք ու երկրպագութիւն մատուցել, երկրպագել: 2. Կրօնական պարտականութիւնները կատարել, ժամերգութիւն՝ պատարագ եւ կատարել: 3. Ծառայել, սպասաւորել մեկին, ծառայութիւն անել: 4. Մեկին խնամել, հոգալ մեկի կարիքները: 5. Պարտականութիւնը կատարել: ՊԱՇՏԵԼ² (իմ), եցայ, հ. 1. Կիրառել, կիրառուել, բանեցնել, բանեցուել, գործադրել, գործադրուել: 2. Մի բանի պէտք գալ, մի բանի ծառայել»³⁸: Հր. Աճառեանը պաշտել բայը բացատրում է որպէս «...«ծառայել, սպասաւորել, մատուցանել (կերակուր), մատուակել (գինի), հոգ տանիլ, պաշտօն ունենալ եւ վարել, Աստուած պաշտել, երկրպագել» ՄԳր. Ոսկ. ես. Կոչ. եփր. ծն. և ա. կոր. որից պաշտիլ «մի բանի ծառայել, մի բանի համար գործածուիլ, պէտք գալ»³⁹:

ե) Ծագումնաբանական դիտարկումներ: Գ. Ջահուկեանը, փաստելով, որ վաղնջահայերէնում սակաւաթիւ են կրօնի եւ նախապաշարմունքի հետ կապուած բնիկ հն-

35 Նոյն տեղում, էջ 1182:

36 Հ. Մեսրոպեան, Կրօնակեղեցական բառապաշարը հայերէնի բարբառներում, Երեւան, 2016:

37 Նոր բառգիրք Հայկազեան լեզուի..., հտ. 2, էջ 597:

38 Ռ. Ղազարեան, Գրաբարի բառարան, հտ. 2, էջ 386:

39 Հր.Աճառեան, Հայերէն արմատական բառարան, Երեւանի Համալսարանի Հրատ., Երեւան, 1926, հատոր 4, էջ 23:

դեւերոպական բառերը, պաշտաւն բառը ներառում է «կրօն եւ նախապաշարմունք» իմաստաթեմատիկ խմբի մէջ՝ կարեւորելով, որ նախաքրիստոնէական հայ կրօնի հետ կապուած շատ բառեր իրանական ծագում ունեն⁴⁰, այդ թւում պաշտաւն բառը, որի հիմքում ընկած է իրանական լեզուներից փոխառեալ պաշտ (պաշտեմ) արմատը:

Սա, նկատենք, իւրօրինակ իրողութիւն է: Վաղնջահայերէնի շրջանում ցեղակից լեզուների՝ տուեալ պարագայում իրանական լեզուները ներկայացնող հանրութիւնների հետ հայերը գտնուել են կրօնադաւանական պաշտամունքի միեւնոյն ոլորտում, եւ դաւանաբանական բառամիաւորները հաւասարաչափ գործառել են երկու լեզուներում եւս՝ բառաիմաստային որոշակի գործածութիւններով: Պաշտեմ եւ բազմաթիւ այլ բառերի առաջնային աղբիւրը, ծագումը, ըստ 19-րդ եւ 20-րդ դարերի՝ մինչեւ օրս գործող լեզուաբանական տուեալների, համարւում են իրանական լեզուները: Այդուհանդերձ, կասկածելի ենք համարում, որ այդ բառարմատների վերջնական ծագումն իրանական է, քանի որ տարածքային միեւնոյն գօտում ապրող հայկական եւ իրանական հանրութիւնները հոգեմտածական, կրօնադաւանաբանական միեւնոյն գօտում են գտնուել: Այդ բառերի իրանական ծագումը վերջնական լինել չի կարող նոյնիսկ այն պարագայում, եթէ հաշուի առնենք այդ միաւորների՝ իրանական աղբիւրներում ունեցած առաջին վկայութիւնները: Ի դէպ, դասական հնդեւրոպաբանութեան մէջ հէնց նշուած հանգամանքն է կանխորոշում, որ այդ բառերի սկզբնաղբիւրը համարուեն իրանական լեզուները:

Կարծում ենք՝ իրանական համարուող բառերի մեծ մասը կամ մի մասը կարող են լինել կա՛մ հնդեւրոպական ընդհանուր

ծագման արմատներ, որոնք պահպանուել ու աւանդուել են երկու կամ աւելի լեզուներում, կա՛մ, ինչպէս ընդունուած է, իրանական են, կա՛մ հայկական: Այդ բառամիաւորների բուն հայկական լինելու վերաբերեալ պատմալեզուաբանական տուեալներ գրեթէ չկան: Իրանական են համարւում ըստ հնդեւրոպաբանական ընդունուած նորմատիւնների: Հնդեւրոպական ընդհանուր ծագման արմատներ լինելու հարցում կարող են լինեն ինչպէս ենթադրեալ, այնպէս էլ տրամաբանական վարկածներ: Սրանց վերաբերեալ տուեալներ նոյնպէս չկան, սպասում են իրենց գալիք հետազօտող-համեմատաբանների բացայայտումներին: Այդուհանդերձ, նման մի փորձ կը կատարենք ստորեւ:

Ինչպէս նշեցինք, պաշտել բայը (*պաշտ բայարմատը) փոխառութիւն է իրանական բարբառներից: Հայերէնում այն համարւում է փոխառութիւն հիւսիսարեւմտաիրանական բարբառներից, պայմանականօրէն ընդգրկւում է հայերէնում մարական կամ պարթեական խմբի փոխառութիւններ շարքում⁴¹: Այս բառի բուն նախնական արմատը պարիշտ միաւորն է: Ըստ էութեան, տեղի է ունեցել պարիշտ>պարշտել>պաշտել «ծառայել, պաշտել» անցումը⁴²: Այս արմատի վերապրուկային հետքերը տեսնում ենք քարեպարիշտ, կոապարիշտ, դժպարիշտ, բերամապարիշտ «մատուակ», զրապարիշտ, մարդապարիշտ, վատապարիշտ, վատապարշտութիւն, ամբարիշտ⁴³ (իմա՛ ան-պարիշտ. այս բառը են-

41 Հր. Աճառեան, Հայոց լեզուի պատմութիւն, Առաջին մաս, ԵՊՀ հրատ., Եր., 1940, էջ 231, 280:

42 Գ. Զափուկեան, Հայերէն ստուգաբանական բառարան, «Ասողիկ» Հրատարակչութիւն, Երեւան, 2010: Ցուցակ 1, էջ 621:

43 Friedrich Müller, Neupersische und armenische Etymologien: Source: Wiener Zeitschrift für die Kunde des Morgenlandes, Vol. 5 (1891), pp. 182-190, Published by: Department of Oriental Studies, University of Vienna, p. 186.

40 Գ. Զափուկեան, Հայոց լեզուի պատմութիւն, 1987, էջ 539:

թարկուել է փոխադրեցական հնչիւնափոխութեան առնմանութեան եւ տարնմանութեան օրէնքներին, կրել որոշակի հնչիւնական փոփոխութիւններ):

*Պաշտ արմատի վերաբերէալ հետազոտողներն ունեն հիմնականում երկու տեսակէտ: Ըստ ուսումնասիրողների մի խմբի՝ այն յանգում է հին իրանական՝ *pari-sta միաւորին, որի առաջին բաղադրիչը նշանակում է «շուրջ, բոլորակի», երկրորդը՝ «կանգնել», որը բառի ներկայի բայական հիմքն է, այսինքն՝ բնիմաստում «բոլորակի կանգնել» (>պաշտել) նշանակութիւնն ունի: Ըստ իրանագէտների միւս խմբի՝ այն (SWI parist եւ NWI (պարթեական խումբ) parišt-) նշանակել է «ծառայել»: Ընդունուած նորմերին համապատասխան՝ Հայերէնի պաշտել ձեւը հէնց ծագել է պարթեական խմբի parišt ձեւից:

Համեմատելով ժամ. պրսկ. پرستیدن (parastīdan) «պաշտել» <միջ. պրսկ. paristītan⁴⁴ ձեւերը՝ ակներեւ է դառնում, որ նրա անցեալի հիմքը parist ձեւն է՝ առաջացած լինելով հին իրանական pari-štā «պաշտամունք, երկրպագութիւն» ձեւից, որի բառային իմաստն է «բոլորակի կանգնել»: Այն կազմուած է *pari- «շուրջ, բոլոր» նախածանցից եւ *-štā- բայական արմատից, որի հարաւարեւմտաիրանական զարգացումն է -stā-* ձեւը: Սա վերականգնում է հմտ. ժամ. պրսկ. īstādan «կանգնել» ձեւի գոյութեամբ⁴⁵: Հայերէնում

իրանական համարում ունեցող այս փոխառութեան մէջ հին իրանական *-št- բաղադրանական խմբի պահպանումը ցոյց է տալիս, որ բառը փոխառուել է մինչեւ դրա անցումը հարաւարեւմտաիրանական -st-ի կամ հէնց պարթեերէնից, որը լինելով միջին իրանական հիւսիսարեւմտեան ճիւղի լեզու պահպանում էր հին իրանական -št- բաղադրանական խումբը՝ ի տարբերութիւն հարաւարեւմտաիրանական ճիւղի լեզուների, այդ թւում՝ պարսկերէնի:

Հր. Աճառեանը հայերէնում վերջնական կիրառութեան դրուած պաշտել բայի մասին տալիս է հետեւեալ բացատրութիւնը. «...պաշտել <*պարիշտել, որի անշեշտ ի ձայնը սղուելով՝ *պարշտել (ինչպէս որ գտնում ենք դեռ պարշտելի Տիմոթ. Կուզ էջ 32, պարշտութիւն «պաշտօն, ծառայութիւն» անդ, էջ 249, պարշտակից՝ էջ 255) եւ ր ձայնը 2-ի մօտ ջնջուելով՝ պաշտել»⁴⁶: Հնչիւնափոխական այս անցումներից ամբողջացել է պաշտ արմատը, որի անկախ գոյութեան վկայութիւնները կան հետեւեալ բաղադրութիւններում՝ բարեպաշտ, երկապաշտ «հացկատակ», կռապաշտ, աստուածապաշտ, հեշմակապաշտ, դիւապաշտ, լուսնապաշտ, ճշմարտապաշտ, ուրուապաշտ եւ այլն: Ըստ Աճառեանի՝ այն առաջացել է «=իրան.*pari-štā «պաշտամունք, երկրպագութիւն» ձեւից, որ կազմուած է pari- մասնիկով՝ sthā- արմատից եւ նշանակում է «շուրջ կանգնիլ»: Սրանից են յառաջացած նաեւ պհլ. parastātan «պաշտել», parastīšn «պաշտումն», պրս. parastīdan «պաշտել», parast «պաշտօղ, ծառայող», >s փոխանակութեամբ, որ սովորական է պարսկական բարբառներում: Հայերէնը իր 2 ձայնով (*pari-štā>պարիշտ) պահում է

44 Nyberg H. S., *A Manual of Pahlavi*, II: Glossary, Wiesbaden, 1974, p. 659:

* Հին իրանական -xt- < հարաւարեւմտ. -st- զարգացման համար տե՛ս Hübschman H., *Persische Studien*, Strassburg, 1895, p. 236:

45 Darmesteter J., *Etudes iraniennes*, I-II, Paris, 1883, p. 301, Müller, F.. *Zur Frage über Den Ursprung Der Uigurisch-mongolisch-mandžu'schen Schrift. — Neupersische und Armenische Etymologien. — Bemerkungen über Armenische Texte*, in: *Wiener Zeitschrift für die Kunde des Morgenlandes* 5 (1891), p. 186, Horn P., *Grundriss der Neupersischen Etymologie*, Strassburg, 1893, p. 298, Mo-

hammad Hassan Doust, *An Etymological Dictionary of the Persian Language*, Vol. 1.

46 Հր. Աճառեան, *Հայերէն արմատական բառարան*, Երեւանի Համալսարանի Հրատ., Երեւան, 1926, Հտ. 4, էջ 23-24:

իրանեան հնագոյն ձեւը: Նոյն բառը պահուած է նաեւ կելտական խմբի մէջ. համադրու. hires «պաշտող», amairis «ամբարիշտ» (Vendryes MSL 20, 267)⁴⁷:

Բառի ՏԵ- բաղաձայնախումբը յուշում է, որ այն պատկանում է հայերէնում հիւսիսարեւմտաիրանական (պայմանականօրէն մարական կամ պարթեւական խումբ) փոխառութիւնների թուին: Գ. Զահուկեանը իր բառարանում պարիշտ/պաշտ արմատներով ներկայացնում է հետեւեալ բաղադրութիւնները՝ բարեպարիշտ, բերանապարիշտ, կռապարիշտ, զրապարիշտ, մարդապարիշտ, պարշտել, պարշտութիւն, /պաշտ/ պաշտումն, պաշտակ «ծառայ, սպասաւոր», պաշտաւն, պաշտաւեայ, բարեպաշտ, կռապաշտ, աստուածապաշտ, դիւապաշտ, լուսնապաշտ, ճշմարտապաշտ, ուրուապաշտ⁴⁸:

Պաշտ արմատը կենսունակ է նաեւ հայերէն բաղադրութիւններում: ՆՀԲ-ում բերում են հետեւեալ բառամիաւորները՝ պաշտակ, պաշտական, պաշտամունք (տե՛ս՝ պաշտօն), պաշտելութիւն, պաշտեմ/-պաշտել/պաշտիմ, պաշտումն, Լաւրենտի Յովհաննիսեանի բառարանում՝ պաշտամանել, պաշտելի⁴⁹, իսկ Էդ. Աղայեանի բացատրական բառարանում բերում են հետեւեալները՝ պաշտական, պաշտամունքային, պաշտանք, պաշտելի, պաշտելիութիւն, պաշտմունք: Հր. Աճառեանը յիշատակում է նաեւ Երեմիա Մեղրեցու «բաղբրքում» յիշատակուող պաշտել «ն-

ման կամ կերպարան» բառը, որի հիմքում կարող է եւ ընկած է պաշտ արմատը⁵⁰:

Հր. Աճառեանը Արմատական բառարանում այլ ուղադրաւ տուեալներ է յայտնում պաշտեմ բառի ծագումնաբանական իւրայատկութիւնների վերաբերեալ. «ՆՀԲ պրս.parastidan «պաշտել» ձեւի հետ: Բագրատունի, Քեր. զարգ. 654 պրս. parast, իսկ 690 պարիշտ «այն է պար գալն զիւրիք, փարիլն, ըստ մեր բառին»: Windisch. 43 սանս. upasthā? Նոյնը առանց կասկածականի Böttich. Arica 84, 405, Lag. Urgesch. 151:-Pictet 2, 691 սանս. *bhaǵ արմատից: Lag. Beitr. bktr. Lex. 58 սանս. pršta? Canini, Et. étym. 71 յն. βᾱχXios, լտ. paganus բառերի հետ: Պարոնեան, Երկրագունտ 1885, 490 իմաստ և զնդ. մագդ ձեւերի հետ: Հիւնք. զանազանում է պաշտել «ծառայել աստուծոյ» = պրս. փերեսթիյտէն եւ պաշտել «մատուակել» = պրս. Էնպաշթէն «լնուլ»: Հիւբշ. 221 ասում է թէ կապ չունի հյ. պաշտպան բառի հետ: Ալիշան, Հին հաւատք 12 պրս. պիհեշտ «դրախտ» կամ հյ. պատարագ, պատրուակ, պատիւ, պաղատանք, պագանել, պատշան բառերի հետ, որի մէջ միշտ կա պա ձայնախումբը: Marquart, Յուշարձան 292 հպրս. *pati-štā-man ձեւից է դնում հյ. *պաշտաման>-պաշտօն (բայց անյարմար է կորած Ե-ի պատճառաւ): -Müller, Մառ եւ Salemann, Manichäische Studien ZAN 8 (1908), 114 կցում են իրանեան բառին, որ վերջին անգամ վերի ձեւով բացատրում է Meillet MSL 22, 217»⁵¹:

Հր. Աճառեանի վերոբերեալ տուեալները կարեւոր են այնքանով, որ լոյս են սփռում պաշտարմատի՝ հնդեւրոպական վե-

47 Հր. Աճառեան, Հայերէն արմատական բառարան, Երեւանի Համալսարանի Հրատ., Երեւան, 1926, Հատոր 4, էջ 24:

48 Գ. Զահուկեան, Հայերէն ստուգաբանական բառարան, «Ասողիկ» Հրատարակչութիւն, Երեւան, 2010: Ցուցակ 1, էջ 621:

49 Լ. Յովհաննիսեան, Գրաբարի բառարան - Նոր հայկազեան բառարանում չվկայուած բառեր, Էդիթ Պրինտ, Երեւան, 2010, էջ 237-238:

50 Հր. Աճառեան, Հայերէն արմատական բառարան, Երեւանի Համալսարանի Հրատ., Երեւան, 1926, Հատոր 4, էջ 24:

51 Հր. Աճառեան, Հայերէն արմատական բառարան, Երեւանի Համալսարանի Հրատ., Երեւան, 1926, Հատոր 4, էջ 24:

րականգնուած լեզուավիճակներում եւ ցեղակից լեզուներում ունեցած համարժէքների վերաբերեալ, այն է՝ սանսկրիտում՝ *bhaḥ, յունարէնում՝ βᾱχXios, լատիներէնում՝ paganus: Այս եւ իրանական լեզուներում, հայերէնում եղած ձեւերի գոյութիւնը հաւաստումն է այն բանի, որ կասկածելի է դառնում այս բառամիաւորի բուն իրանական լինելը: Այս միաւորների համադրումը կարող է վկայել, որ այն մեկ ընդհանուր հնդեւրոպական բառարմատ է՝ ցեղակից լեզուներում ունենալով ձեւաիմաստային տարբերակներ: Հայերէնի պարագայում այն կամ փոխառութիւն է իրանական լեզուներից, կամ, ինչպէս կը տեսնենք, բարիշ տարբերակի գոյութեամբ իր ուրոյն տարբերակն է ունենում: Այսկերպ հնարաւոր է դառնում վերականգնել այս բառամիաւորի ցեղակից լեզուներում ունեցած տարբերակային հնարաւոր բոլոր ձեւերը՝ սանս. *bhaḥ, իրան. *pari-štā, յն. βᾱχXios, լատ. paganus, իռլ. hires, հայ. պաշտ/ւմ/, հայ. բարբառ. բարիշ: Հետաքրքիր է սանսկրիտի եւ հայերէնի ձեւերը միաւորում են ձայնեղութեան յատկանշով:

Կարծում ենք՝ հայերէնի բարբառային բարիշ, բարիշել, բարիշուքիւն բառերը նոյնպէս կապւում են պարիշտ ձեւի հետ: Հայերէնի բառարանագրական տուեալներում չկան այս բառերի ստուգաբանական ու բացատրական մեկնութիւնները: Միայն Հայոց լեզուի բարբառային բառարանում են ներկայացւում որոշ տուեալներ, այն է՝ «Բարիշ, Ար. Ղրբ. Մշ. Հաշտ: Հաշտ ու բարիշ ապրելիս են ըլնում (ՏՆ)....: ԲԱՐԻՇԵԼ, Ար. Կր. Մկս. Մշ. Նկմ. ՆՁ. Վն. ԲԱՐԻՇԵԼ, Թմ. Շտխ. Զվխ. Բարուշել, Մկս. ԲԸՐԻՇԵԼ, Ղրբ. 1. Հաշտուել, միմեանց նկատմամբ թշնամութիւնը վերանալ: Հելա մեկմեկու երես էինք ծուռտում, էլի բարիշում էինք....: ԲԱՐԻՇՈՒԹԻՒՆ, Ար., ԲԱՐԻՇՈՒԹԻՒՆ, Բլխ. Հաշտութիւն: Մարդ ինչ-

քան էլ որ կռիւ էնէ, մեկ երես բարեշութիւնի կթողնէ (ՄԾ)»⁵²: Եթե չընդունենք բարիշ բառի՝ պաշտ միաւորի հայերէն համարժէքը լինելը, ապա կարող ենք ասել, որ գործ ունենք պարիշտ>բարիշ անցման հետ՝ հնչիւնափոխական եւ իմաստափոխական գործօններով պատճառաբանուած: Հետեւաբար՝ հնարաւոր է, որ հայերէնի խօսուածքներում խուլ պ-ն ձայնեղացել է՝ պ>բ բաղաձայնական տեղաշարժով, իսկ բառավերջեան տ-ն ենթարկուել հնչիւնների անկման օրէնքին: Մեր այս տեսակէտին նպաստում է այն, որ որեւէ կերպ չստուգաբանուած այս բառերի իմաստներն ունեն գիտակցուող իմաստային աղբրսներ պարիշտ, պարշտել, պաշտել, պաշտում/պաշտան բառերի հետ: Ի դէպ, հայերէնի ամբարիշտ (ան-պարիշտ) ձեւը հաստատող տուեալ է այն բանի, որ հայերէնի խօսուածքներում հաստատական բարիշ ձեւն օրինաչափ պէտք է համարել, այլապէս հնարաւոր է բացատրել ամբարիշտ ժխտական ձեւի գոյութիւնը: Այս տուեալները մեզ թոյլ են տալիս ասելու, որ հնարաւոր է բարիշ ձեւը լինի դիտարկուող բառի հնդեւրոպական բուն արմատի հայերէն տարբերակը՝ չգործածուած ու չարձանագրուած գրական յուշարձաններում:

Պաշտան/պաշտումն (այդ թւում՝ պաշտել բայը) բառն իր տարբերակներով գործածուած է նաեւ հայերէնի բարբառներում՝ հիմնականում ունենալով կրօնական իմաստներ: Հր. Ը արմատական բառարանում տալիս է քննարկուող բառի ձեւահնչիւնական տարբերակների տարածման սահմանները. «....ալշ. Մշ. Ջղ. Սլմ.պաշտել, Ախց. Երեւ. Մրդ. պաշտել, Ագլ. Գոր. Ղրբ. Մկ. Շմ. Տփ.պաշիլ, Ննխ.բաշտել, Պլ. Սեբ.-բաշդել, Զթ. Խրբ. բաշդիլ, Ասլ.բաշդէլ,

52 Հայոց լեզուի բարբառային բառարան, Հրաչեայ Աճառեանի անուան Լեզուի ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան, 2001: Հատոր 1, էջ 170:

Սուեդ. Տիգ.բ²դիլ»⁵³: Պոլսի բարբառում պաշտել բառը ձեռք է բերել նաեւ «վրան գուրգուրալ, ամեն հոգս տանել» իմաստը: Հայերէնի բարբառներում պաշտ արմատը գործառում է նորանոր կազմութիւններում, ընդ որում նոր իմաստներով, այն է՝ պաշտոն (Եւգոնիայի բարբառ) «չափազանց գուրգուրանքի, գրեթէ պաշտումի առարկայ եղող (զաւակ եւն)», պաշտում (Ագլ. բարբառ) «պատարագէն յետոյ տրուած ճաշ», պաշտում/ա/հաց (Երեւ. Ղգ. բարբառ) «մեռելներուն հոգուն համար մեռելատիրոջ տան մէջ տրուած սեղան՝ ճաշ», պաշտում/էց (Երեւ. բարբառ) «ժամուց, ժամարարին տրուած դրամական վարձատրութիւնը», պաշտում/օն-պատարագ (Ղգ. Տփ. բարբառ) «(կրկ.) պատարագ»⁵⁴:

Հր. Աճառեանի տրամադրած տուեալները կարեւոր են բազմաթիւ առումներով, որոնք լոյս են սփռում պաշտում/պաշտումն բառի ծագումնաբանութեան դժուարութիւնները եւ այլ բառերի հետ ունեցած կապերը պարզելիս: Այդ տուեալների մէջ արժանայիշատակ են Հ. Ղ. Ալիշանի դիտարկումները, համաձայն որոնց՝ բազմաթիւ բառեր կապուած են պաշտ արմատի հետ: Հ. Ղ. Ալիշանը գրում է. «յիշեմք յետ այսոցիկ եւ պաշտօն բառը, որ ըստ իմաստին՝ կող գայ յետ Հաւատոց, որոյ մտաւոր արտայայտութիւնն է Դաւանանքն, զգալին եւ նիւթական՝ Պաշտօնն, որոյ վրայ հարկ կ'ըլլայ խօսիլ յետ իւրաքանչիւր հաւատոց բացատրութեան. իսկ ծագումն բառին՝ ի բարդութիւնս մտեալ (առանձին պաշտ չի գրուիր), թուի ի Պարսից մտեալ կամ հասարակ Հայոյն եւ նոցա. գուցէ

անոնց Պիհէշտ բառէն՝ որ արքայութեան պէս բան մի նշանակէ, յորմէ եւ Արտիպիհէշտ՝ հրեշտակապետի անուն, իբրեւ վեհագոյն: Գուցէ նկատելու արժանի համարուի եւ բառին ի մեզ լեզուս Պա վանկով՝ յարգելի իմաստ տուող բառից կազմութիւնն. ինչպէս Պատարագ, Պատրուակ, Պատիւ, Պաղատանք, Պագանել, Պատշաճ եւ այլն: Այս երկբայական եւ ոչ շատ կարեւոր բառից քննութիւնները յանձնելով երկայնամտաց՝ անցնինք առ ամենէն կարեւորն որ է Աստուած»⁵⁵:

Յատկապէս չստուգաբանուած պահանջիւնախումբ պարունակող պագանել, պատարագ բառերն իրենց բնիմաստային իւրայատկութիւններով առնչուած են պաշտում/պաշտում/պաշտումն հասկացութեան արտայայտած իմաստների հետ, յատկապէս՝ նուիրատուական իմաստ արտայայտելու առումով կարող են առաջացած լինել հէնց նոյն բառարմատից: Հաշուի առնելով դա՝ ստորեւ կ'անդրադառնանք այդ բառերից իւրաքանչիւրին եւ նրանց ձեւաիմաստային իւրայատկութիւններին:

Պագ արմատը Հայերէնում ինքնուրոյն գործածութիւն չունի: Միայն արդի, յատկապէս Կենտրոնական Հայաստանի բարբառներում գործառող պագ/պակ/պաք առնել յարադրութեան մէջ է այն ինքնուրոյն գործածում, ինչպէս նաեւ՝ հինհայերէնեան հրամայականի պա՛գ ձեւում: Հր. Աճառեանը այս բառի մասին գրում է. «Պագ «համբոյր». արմատ հների մօտ անգործածական. կայ միայն յետնաբար, ինչ. Թլրկ. 34, Քուչ. 56. որից պագանել «համբուրել (կտր. պագի, հրմ. պա՛գ). գործածուած է միայն երկիր բառի հետ. այսպէս՝ երկիր պագանել Սգր. Ոսկ. ես. Սեբեր. Եփր. Թգ. միայն մեկ անգամ Գ. Թագ. ԺԺ. 18 գործածուած է առանձին «որոյ ոչ իցէ պագեալ զնա», բայց դարձեալ ըստ յն.

53 Հր.Աճառեան, Հայերէն արմատական բառարան, Երեւանի Համալսարանի Հրատ., Երեւան, 1926, Հատոր 4, էջ 24:

54 Հր. Աճառեան, Հայերէն գաւառական բառարան, Լազարեան Ծեմարան Արեւելեան Լեզուաց, Թիֆլիս, 1913, էջ 895, Սահակ վարդապետ Ամատունի, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912, 548-549:

55 Հ. Ղ. Ալիշան, Հին հաւատք կամ հեթանոսական կրօնը Հայոց, Վեներտիկ-Ս. Ղազար, 1910, 13-14:

իմանալի է «պագեալ նմա զերկիր»։ յատկապէս ասուում է երկիր պագանել (իբր մէկ բառ) Սգր. Ոսկ. ես. Եփր. Համար. կամ երկրպագել խոր. Շար. երկրպագու ՅՀ. դ. 23. Եղիշ. երկրպագութիւն Շար. Նար եւն»⁵⁶։ Ի տարբերութիւն Հր. Աճառեանի՝ Գ. Զահուկեանը պագ արմատը կասկածանքով ու հարցականով համարում է հայերէնի բառաշարում բնիկ հնդեւրոպական հիմնաշերտի հետ զուգադրելի միաւոր⁵⁷ իր կարծիքը որեւէ կերպ չապացուցելով հիմնաւոր փաստերով։ Այն, որպէս արմատական միաւոր, կայ գրաբարեան պագշոտ/պակշոտ «վաւաշոտ, ցանկասէր, անառակ, ցոփ» բառում։ Պագանել բայը, որը հիմնականում գործածուում է երկիր բառի հետ՝ ձեւաւորելով յարադրութիւն՝ ունի պատմականօրէն հետեւեալ իմաստը. «...չ. գետինը՝ հողը համբուրել ի նշան խոնարհութեան եւ յարգանքի, երկրպագութիւն անել, երկրպագել»⁵⁸։ Բառի իմաստային այսպիսի պատճառաբանութեան, կարծում ենք, ակնյայտ ցոյց է տալիս պաշտ եւ պագ բառերի միջեւ եղած նկատելի կապը։ Հնարաւոր ենք համարում պաշտ>պագ անցումը։ Թէ շտ հնչիւնախումբը ինչ օրէնքներով կարող էր յանգել ետնալեզուային գ-ի, մնում է առկախ։ Այդուհանդերձ, պագշոտ բառի 2 հնչիւնի գոյութիւնը լրացուցիչ յուշում է, որ հնարաւոր է պաշտ>պագ անցումը։

Մեր այս տեսակէտը սպառնիչ լուծում չէ պաշտ եւ պագ բառերի ծագումնաբանական ընդհանրութեան վերաբերեալ։ Հնչիւնական օրէնքների եւ դրանցով պայմանաւորուած փոփոխութեան վերջնական

ճշգրտութեան հարցը մնում է գալիք հետազոտողներին։ Սակայն իմաստային համապատասխանեցումը, ըստ իս, կասկածից վեր է դարձնում նման հաւանական կապի գոյութիւնը։

Գ. Զահուկեանն իր ստուգաբանական բառարանում պագ բառի մասին արտայայտել է հետեւեալ կարծիքը. «Պագ /բ. պաշ/ «Համբոյր»։ Բաղադրութիւններ՝ պագանել, (երկիր պագանել), երկրպագու, երկրպագութիւն։ Բնաձայնական /շրթունքների շարժումն ընդօրինակող/ կազմութիւն, որի նմանակները կան հնդեւրոպական եւ ոչ հնդեւրոպական լեզուներում»⁵⁹։ Մեկ այլ աշխատութեան մէջ Գ. Զահուկեանը պաշ բառը փորձում է կապել արեւելակովկասեան (Նախեան-Դաղստանեան) լեզուների՝ հայերէնի հետ ունեցած առնչութիւններում՝ գտնելով, որ զգալի են երկու լեզուներում այն զուգադրիւմները, որոնք բնաձայնութիւններ եւ մանկական բառեր են, ընդ որում՝ «...հայերէն ձեւերը յաճախ յանգում են հնդեւրոպական մակարդակի վերականգնումների՝ հայ. պագ, պագանեմ, բրբռ. պաշել-լեզգ. плагъ, плах, հին пла «Համբոյր»...»⁶⁰։ Ակնյայտ երեւում է, որ Գ. Զահուկեանը զարգացնում է պագ>բարբառային պաշ համարժեքութեան զուգահեռի գոյութիւնը, բայց հիմնաւոր փաստարկումներ չի մատուցում։

Աւելի վաղ Հր. Աճառեանը Հայերէնի գաւառական բառարանում վկայակոչում է պագ, պաշ «Համբոյր», պագ անել, պաշել, պաշ անել, պագել «Համբուրել», փղքշ. պագիկ, պաշիկ «Համբուրիկ», պաշիկ ընել «Համբուրել», պաշիկ մը տալ «Համբոյր տալ», պագ/ուկ «Համբուրուած», պագ/ուտիլ, պագ/ուտել, պագ/վրտիլ, պագ/ տուիլ «ի-

56 Հր. Աճառեան, *Հայերէն արմատական բառարան*, Երեւանի Համալսարանի Հրատ., Երեւան, 1926, Հատոր 4, էջ 3։

57 Գ. Զահուկեան, Հայոց լեզուի պատմութիւն. նախագրային ժամանակաշրջան, ԳԱԱ հրատ., Երեւան, 1987, էջ 115։

58 Ռ. Ղազարեան, *Գրաբարի բառարան*, հտ. 1, Երեւան, 2000, էջ 415։

59 Գ. Զահուկեան, *Հայերէն ստուգաբանական բառարան*, «Ասողիկ» հրատ., Եր., 2010, էջ 615։

60 Գ. Զահուկեան, Հայոց լեզուի պատմութիւն. նախագրային ժամանակաշրջան, ԳԱԱ հրատ., Երեւան, 1987, էջ 608։

րար համբուրել»⁶¹ միաւորները: Հր. Աճառեանը պաշ բառը ջանում է կապել վրաց. պաշի «համբոյր», քրդ. bac «համբուրել»⁶² բառերի հետ, ինչպէս նաեւ պագ բառի վերաբերեալ ներկայացնում այլ տուեալներ, որոնք կը բերենք ստորեւ. «ՆՀԲ լծ. ումկ. պաշիկ ընել, պրս. bōsīdan եւ իտալ. baciare «համբուրել»: Canini, Et. étym. 8 սանս. aphak «համբուրել», իսկ էջ 71-ում երկրպագել միացնում է հյ. բագիմ եւ լատ. paganus «կռապաշտ» բառերին: Հիւնք. պակշոտ բառից: Patrubany յն. «խրել, կոխել» բառերի հետ՝ հնիս. phāgh արմատից: Նոյն, SA ՀԱ 1907 հնիս. pagh «պնդել, հաստատել, կցել» արմատից՝ ի մասնիկով, որ համառոտուած է epi «վրայ» նախդիրից. հմմտ. յն. ... «պնդել», սանս. pāca «կապ, չուան», լիթ. pozity «կցել, զօդել» ևն: Կան մեր բառին մօտիկ հնչող մի խումբ հոմանիշ ձեւեր. ինչ. օսս. պաքանիմ, պրս. bōsīdan, գւռ., պրս. māč (այսպէս ըստ Horn 235 որ ուրիշներ թուրքերէն են համարում. հմմտ. չաղաթ. mač, mačac, թրք. bače «պաշիկ»), քրդ. mač, mačip, աւար., ubač, լատ. bacio, ֆրանս. baisier, գերմ. schmatz, լեհ. buzia, buziak, բուլղար. bacam, baknt, baknuvam «համբուրել», որոնք համարում են բնաձայն (այսպէս Berneker 37, Horn 235)»⁶³:

Պագ եւ պաշ բառերի այսպիսի պատկերը խօսում է այս բառերի՝ միեւնոյն աղբիւրից ծագած լինելու ոչ վերջնական տուեալների մասին: Այս հանգամանքը լրացուցիչ հնարաւորութիւն է մեզ ընձեռում զարգացնելու պաշտ>պագ>պաշ հնարաւոր անցումը: Եթէ պաշտ>պագ անցման համար հնչիւնական օրէնքները հիմնաւոր

րելի չեն, ապա պագ>պաշ>պաշ անցման համար դեր կարող է խաղալ ետնալեզուային Գ կոկորդային բաղաձայնի ուժեղ քմայնացումը, որը կարող էր յանգեցնել նման հնչիւնափոխութեան: Պաշ բառի վաղագոյն վկայութիւնը հնարաւոր չէ ճշգրտել: Բառը վկայում են միայն հայերէնի կենդանի բարբառները եւ հայերէնի բարբառներին վերաբերող նորագոյն բառարանները: Չկան մատենագիտական տուեալներ պաշ բառի գործածութեան ստոյգ ժամանակի վերաբերեալ: Հաշուի առնելով, որ այն ուշ շրջանում ի յայտ եկած գործածութիւն է՝ կարծում ենք՝ այն կարող է քմայնութեան ենթարկուած իրողութիւն լինել, երեւոյթ, որ շատ տարածուած է հայերէն բարբառներում: Հայերէնի՝ յատկապէս Վասպարականի-Սիւնիքի-Արցախի տարածքի եւ յարակից այլ բարբառներում գոյութիւն ունեն քմային Գ, Կ, ք պայթականները յատկապէս այն դէպքերում, երբ Գ, Կ, ք ետնալեզուայիններին յաջորդում են առաջնային շարքի ձայնաւորները⁶⁴: Այդ ձայնաւորների արտաբերման ժամանակ Գ, Կ, ք պայթականների արտաբերութիւնը լեզուի յետին շարքից տեղափոխուած է միջին մասը, եւ բաղաձայնները ստանում են քմային արտասանութիւն: Հետաքրքիր է, որ պաշ բառը գործածուած է Արարատեան, Թբիլիսիի, Ղարաբաղի, Շամխորի, Բորզոլի, Մեղրիի, Խոտորջուրի, Վանի⁶⁵ բարբառներում, որոնցում կայ քմայնութեան երեւոյթը: Ընդ որում, յիշեալ բարբառներում օրինաչափ են ձայնեղների շնչեղ խլացման երեւոյթները:

Ուշագրաւ է նաեւ այն, որ Գ, Կ, ք պայթականները մի շարք վայրերի խօսուածքներում ենթարկուած են մի այլ փոփոխու-

61 Հր. Աճառեան, Հայերէն գաւառական բառարան, Լազարեան Ծեմարան Արեւելեան Լեզուագ, Թիֆլիս, 1913, էջ 890:

62 Հր. Աճառեան, Հայերէն արմատական բառարան, Երեւանի Համալսարանի Հրատ., Երեւան, 1926, Հատոր 4, էջ 3:

63 Նոյն տեղում:

64 Հ. Մուրադեան, Հայոց լեզուի պատմական քերականութիւն, Գատոր 1, Երեւան, 1982, էջ 310:

65 Հայոց լեզուի բարբառային բառարան, Հրաչեայ Աճառեանի Անուան Լեզուի Ինստիտուտ, ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիա, Երեւան, 2001: Հատոր 5, էջ 25:

թեան եւս: Դա նրանց փոխարկումն է ջ, ճ, չ պայթաչփականների: Այս երեւոյթը եւս կատարուում է քմայնութեան միջոցով՝ առաջնային շարքի ձայնաւորներից առաջ ընկած դիրքում: Սա ընդունուած է համարել ուժեղ քմայնութիւն, որի հետեւանքով բաղաձայնների արտաբերութեան ընթացքը միջնալեզուայինից տեղափոխուել է դէպի աւելի առաջ: Սրա պատճառով պայթականները վերածուել են պայթաչփականների: Հայ մատենագրութեան մէջ այսպիսի ուժեղ քմայնութեան հաւաստի տեղեկութիւններ եւ վկայութիւններ չկան: Վայոց Ձորի ձեռագրերից մեկում 1474 թ վկայում է չիրդուն բառաձեւը՝ կապուելով քոյր>քիր>չիր հնչիւնափոխութեան հետ⁶⁶: Էդ. Աղայեանը դրանք համարում է գ, կ, ք պայթականների դիրքային՝ դիտելով մեկ հնչոյթի ենթահնչոյթներ⁶⁷: Սրանից կարելի է եզրակացնել, որ յիշեալ ձեւի գոյութիւնը թուագրւում է 15-րդ դարից սկսած: Այս ամենը մեզ ենթադրել է տալիս, որ պագ>պաչ անցումը կարող է հէնց այդպիսի ուժեղ քմայնութեան հետեւանք լինել նույնիսկ ձայնաւորից յետոյ՝ պագ>պաք>պաթ>պաձ, առաւել եւս, որ պագ/պաչ իմաստային համապատասխանութիւնն անվիճարկելի է:

Այժմ անդրադառնանք պաշտում եւ պատարագ բառերի հնարաւոր առնչութիւններին: Գրաբարի բառարանում պատարագ բառը բացատրւում է որպէս «...1. նուէր, ընծայ, 2. զոհ, մատաղ (աստծուն ընծայուած), 3. կաշառք»⁶⁸: Տեսանելի է, որ պատարագ բառն իմաստային որոշակի երանգներով աղերսներ ունի պաշտ/պաշտում/պաշտումն բառերի հետ: Այդուհանդերձ, յստակ է, որ երկու բառերն էլ նուիրապետական բնոյթ ունեն: Հր. Աճառեանը

բաւականաչափ ծաւալուն անդրադարձ է անում պատարագ բառի ծագումնաբանութեան շուրջ՝ բերելով բանասիրութեան մէջ եղած գրեթէ բոլոր փաստերը: Ըստ այդ փաստերի՝ պատարագ բառը, ըստ ՆՀԲ-ի, կարող է ծագած լինել յարագել բայից եւ պատրուակ բառից (ըստ Հ. Ղ. Ալիշանի՝ պատար «լի» եւ պատրուակ բառից): Ձի բացառել նաեւ այն, որ բառը համապատասխանում է պարսկերէն ba dar kardan «դուրս անել, արտաքսել» բառերին (այստեղ կարեւորութիւն է տրւում այն հանգամանքին, որ պատարագի ժամանակ չմկրտուածներին եկեղեցուց դուրս էին հանում. մինչդեռ, սա ընդունելի չէ. պատարագ բառն իր իմաստի մէջ չի պարունակում «արտաքսել» իմաստը): Այն համարուել է պարսկերէն *պատարագ բառը («...ինչպէս են պատ մասնիկով սկսուող ձեւերը. -արագ մեր արժել, յարգել բառն է, որով նախաձեւը լինում է *պատարագ)՝ «...պատարագ = պրս. պետրագայ «ապացոյց, առաջնորդ ճանապարհի Տեսան»): Հնչել են տեսակէտներ նաեւ, որ այն պրս. badaragāh «սեամ կամ դուռն թագաւորաց» բառն է, ինչպէս նաեւ՝ այն համարուել է արաբերէն պետրեգա բառը կամ փոխառուած է արաբերէն ֆատիր (ֆատիրակ «բաղարջիկ» բառը) ձեւից՝ կրելով պրս. փաղաքչական -ակ ածանցը: Համարուել է նաեւ արաբ. փատիրա «անխմոր հաց, բաղարջ» բառը՝ որպէս արաբերեն ifṭār «ճաշակել, ճաշի սկսիլ»⁶⁹:

Հր. Աճառեանը «Արարատ» հանդէսի 1898 թ. հրատարակութեան էջերում ցոյց է տալիս, որ պատարագ բառի առաջին եւ նախաքրիստոնէական նշանակութիւնն է «նուէր, ընծայ», հետեւաբար չի կարող ծագել «բաղարջ եւ այլն» նշանակող ձեւերից, որոնք քրիստոնէութիւնից յետոյ ի յայտ եկած ձեւիմաստային միաւորներ են: Հր.

66 Հ. Մուրադեան, Հայոց լեզուի պատմական քերականութիւն, հատոր 1, Երեւան, 1982, էջ 313:

67 Էդ. Աղայեան, Գրաբարի քերականութիւն, Երեւան, 1964, էջ 170:

68 Ռ. Ղազարեան, Գրաբարի բառարան, հատոր 2, Երեւան, 2000, էջ 390:

69 Հր. Աճառեան, Հայերէն արմատական բառարան, Երեւանի Համալսարանի Հրատ., Երեւան, 1926, Հատոր 4, էջ 37-38:

Աճառեանը բառի ձեւից եզրակացնում է, որ պատարագ բառն իրանական փոխառութիւն է. «.../ա բռնով. սեռ. պատարագա/ որ մատնանիշ կ'ընէ զանդկերէն *paitiraga եւ ասկէ պահլաւերէն *patarag բառը՝ որուն արմատը պիտի լինի *rag բայական արմատը. իբր զնդ. *paitiragayāmi՝ ընծայեմ, նուիրեմ /պատարագեմ/»⁷⁰: Ինչպես տեսանք, սանսկրիտում վերականգնուել է այս բառի պատարագ «զոհ» իմաստը: Հր. Աճառեանը լեզուաժամանակագրութեան տուեալների հաշուառմամբ հիմնաւորում է, որ պատարագ բառը չի կարող լինել արաբական ծագման, քանի որ պարսկերէնն ու հայերէնն արաբերէն բառեր սկսել են փոխառել ութերորդ դարի սկզբից, որը համընկնում է արաբական տիրապետութեան հաստատմանը պարսկական ու հայկական տարածքներում: Մինչդեռ պատարագ բառը գործածութեան վկայութիւններ ունի դեռեւս դասական մատենագրութեան աղբիւրներում, որով եւ բացառւում է բառի արաբական փոխառութիւն լինելը: Պատարագ բառի՝ իրանական ծագում ունելը հիմնաւորելու համար Հր. Աճառեանը կարեւոր է համարում բառի նախնական իմաստի ճշգրտումը: Այս առթիւ նա գրել է. «առդ՝ պատարագ բառին այլեւայլ նշանակութիւններն իրարու հետ համեմատելով՝ կը տեսնենք, թէ նախնական նշանակութիւնը նուէր, ընծայ կրնայ լինել եւ ոչ ուրիշ բան: Զոհ, մատաղ նշանակութիւնը յառաջացած է ասկէ. բայց աւելի յետին եւ միայն քրիստոնէական շրջանի /զ դարէն վերջ/ ծնունդ է ս. պատարագի նշանակութիւնը: Այս պատճառաւ, առանց նկատողութեան առնելու ձայնական օրէնքներու անհամաձայնութիւնը /հետաքրքիր է մանաւանդ պարսից ակ նուագականը հայերէն ագ ձեւով որ բոլորովին անսովոր է. փոխանակ լինելու ակ/, անհնար է, որ պատարագ մեկնած լինի

վերոյիշեալ ասորական կամ՝ միւս սեմական ձեւերէն, ըստ որում՝ նշանակութեան կողմէ ամենեւին կապ չկայ. պատարագ բառը քրիստոնէական ժամանակի ծնունդ է. աւելի հին հեթանոսական շրջանի մէջ գոյութիւն ունէր այն՝ ընծայ նշանակութեամբ. եւ այս իմաստին պէտք է հետեւին լինելիք քննութիւնները»⁷¹: Հր. Աճառեանի՝ պատարագ բառի հեթանոսական շրջանում գործածութիւն ունենալու համոզումը եւս ցոյց է տալիս նրա հնարաւոր, ենթադրեալ կապը պաշտ/օն, ումն/ բառերի հետ: Թէեւ չկայ բառի համապատասխան իրանական ձեւը, Հ. Աճառեանը հնարաւոր է համարում պատարագ բառի իրանական փոխառութիւն լինելը՝ իր տեսակէտը հիմնաւորելու համար բերելով ենթադրեալ փաստերի փունջ՝ ա/ պ սկզբնատառը, որ «շատ դժուար կարող է բնիկ հայ լինել», բ/ բառում իրար յաջորդող ա ձայնաւորները, որ «շատ սովորական են իրանական փոխառութեանց մէջ», գ/ հայերէնում պատ-ով սկսուող բոլոր բառերը համարւում են իրանական փոխառութիւն: Ըստ Աճառեանի, հէնց այս չափանիշներով էլ պէտք է մեկնաբանուի պատարագ բառի ծագումը:

Հետաքրքիր է, որ պատարագ բառը Գ. Զահուկեանը համարում է հայերէնի զարգացման հնագոյն շրջանի՝ վաղնջահայերէնից հին հայերէնի անցման շրջանի միաւոր՝ դիտարկելով բարբառային տարբերակների հոմանշային զոյգերում՝ «1. ընծայ-ձաւն-ձիր-դաւաւն-նուէր-շնորհ-պատարագ-պարգեւ, 2. ընծայ-ձաւն-զատիկ-զէն (ումն)-զոհ-յագ-յաշտ-ողջակեզ-պատարագ-պաւն»⁷²: Ժնեւում լոյս տեսած Հր. Աճառեանի «Հայերէն ստուգաբանական առձեռն բառարանում» բառը բերւում է որ-

71 Նոյն տեղում:

72 Գ. Զահուկեան, Հայոց լեզուի պատմութիւն. Ասիական հարաւոր ժամանակաշրջան, ԳԱԱ հրատ., Երեւան, 1987, էջ 397:

պէս չստուգաբանուած միաւոր⁷³: Գ. Զահուկեանը պատարագ բառը նոյնպէս համարում է փոխառութիւն իրանական աղբիւրից, բայց նշում է, որ «...բուն աղբիւրը չի հաւաստուած (ժառանգը չէ՞ մ.պ. parag «կաշառք, նուէր» բառի)»⁷⁴:

Պատարագ բառի վերաբերեալ եղած ստուգաբանութիւնները որքան եւ համոզիչ եւ ընդունելի են, այդուհանդերձ լրացուցիչ հնարաւորութիւն են տալիս իմաստաձագումնաբանական կապեր տեսնելու պաշտ/պաշտում/պաշտումն եւ պատարագ բառերի միջեւ: Հնարաւոր ենք համարում պաշտ>պատար+ փաղաքշական ազ(ակ) զարգացումը հնչիւնական որոշակի օրէնքներով պայմանաւորուած, որոնք եւս կարօտ են հիմնաւոր եւ սպառիչ լուծումների: Հնարաւոր ենք համարում, որ այդ -ար մասնիկը լինի հնդեւրոպական ծագման -ero (-ար) վերջածանցը⁷⁵ կամ պարսկերէնի համեմատական աստիճանի -ար ձեւակազմիչ ածանցը:

Որպէս ամփոփում այս հետազոտութեան՝ նշենք, որ լեզուաճանաչողական վերլուծութիւնների, արտաքին եւ ներքին հնարաւոր բոլոր վերականգնումների շնորհիւ պարզ դարձան հայերէն պաշտումն բառի պատմական, սոցիալական, մշակութային, լեզուական պարփակ բովանդակութիւնը եւ առանձնայատկութիւնները: Ըստ ամենայնի՝ պաշտումն/պաշտում/ պաշտումն, պարիշտ/պարշտել/ պաշտել, պարիշտ/բարիշտ, պարիշտել/բարիշտել, պագանել/ պագ/ պագշտոտ/պաչ, պատարագ/ պաշտ բառատարբերակների միջեւ կան պատմաձագումնաբանական կապեր: Դրանց միջեւ եղած բառակազմական, ձեւաբանական, իմաստային եւ ծագումնաբանական ընդհանրութիւններն ունեն ենթադրեալ-տրամաբանական, տեսական ու գիտական, լեզուական ու պատմական արժէք: Պաշտօն բառը, որպէս բառամիաւոր, կենսունակութեան այնքան ընդգրկուն ոլորտներ եւ հասարակական պահանջարկ ունի, որ հիմք է հանդիսացել տասնեակ նորանոր կազմութիւնների համար:

73 Հր. Աճառեան, Հայերէն ստուգաբանական առձեռն բառարան, Մարտիրոս Միմասեան, Ժնն, 2004, էջ 228:

74 Գ. Զահուկեան, Հայերէն ստուգաբանական բառարան, «Ասողիկ» Հրատ. Երեւան, 2010, էջ 624:

75 Գ. Զահուկեան, Հին հայերէնի վերջածանցների ծագումը, Հայոց լեզուի համեմատական քերականութեան հարցեր, պրակ 2, Եր., 1998, էջ 16: